ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Գնել Մագթաղյանը, Արմեն Մարիկյանը, Խալաթ Մկրտումյանը, Ստեփան Օհանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լիպարիտ Նալբանդյան, Կամո Ղարաջյան, Միշա Զալինյան, Աշոտ Մեսրոպյան, Գագիկ Ղարաջյան, Արեն Ֆրանգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Խաչիկ Վարդանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Թամարա Գրիգորյանը

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 07-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Գյուլագարակ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 22-ի «Գյուլագարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 07-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71/

Լսեցին

ԳՏՆՎՈՂ , ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՆ ՖՐԱՆԳՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ «հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնացման միջգերատեսչական հանձնաժողովի» թիվ 233 եզրակացությունը, Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին >> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով Գյուլագարակ համայնքի ավագանին

Հայաստանի Հանրապետության Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 06-027-0188-0039 կադաստրային ծածկագրի 0.301132 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73/

Լսեցին

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-029-0144-0016 կադաստրային ծածկագրի 0,09915հա և 06-029-0144-0017 կադաստրային ծածկագրի 0,09827հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

Լսեցին

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ. նոյեմբերի 30-ի թիվ 10 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից.
ա/նորածիններ ունեցող ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 01 հավելվածի,
բ/հարազատին կորցրած ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 02 հավելվածի,
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Լսեցին

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկի և գույքահարկի տույժերը զիջելու մասին, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել հողի հարկի և գույքահարկի գոյացած տույժերի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72/

Լսեցին

«ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, որոշում եմ.

«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-Ի գործունեությունը ժամանակավորապես իրականացնելու նպատակով տալ համաձայնություն համայնքի կողմից վարձակալելու ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի բնակիչ Արթուր Ասրյանի սեփականություն հանդիսացող 5-րդ փողոց թիվ 41/2 հասցեում գտնվող տունը, ամսական հիսուն հազար ՀՀ դրամով,մեկ տարի ժամկետով:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74/

Նիստն արձանագրեց՝ Թամարա Գրիգորյանը